ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Ինեսա Վահագի Նուշիկյանի «Նորարարական պրոդուկտների ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով՝ Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Ինեսա Վահագի Նուշիկյանի «Նորարարական պրոդուկտների ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսությունը նվիրված է արդի ֆինանսական համակարգի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող բանկային նորարարությունների ներդրման և զարգացման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությանը, որտեղ հեղինակը դիտարկում է թվային տրանսֆորմացիայի ազդեցությունը բանկերի մրցունակության և գործառնական արդյունավետության վրա:

ՀՀ բանկային համակարգի զարգացման ներկա փուլում թվային տեխնոլոգիաների և նորարարական ֆինանսական լուծումների լայն կիրառումը դարձել է բանկերի մրցունակության ապահովման և կայուն գործունեության կարևորագույն պայմաններից մեկը: Ֆինանսական շուկաների գլոբալացման, Ֆինտեխ ընկերությունների արագ զարգացման և ֆինանսական ծառայությունների սպառման վարքագծային փոփոխությունների պայմաններում բանկային համակարգում նորարարական տեխնոլոգիաների ներդրումը ստանում է ռազմավարական նշանակություն՝ նպաստելով ծառայությունների արդյունավետության բարձրացմանը, ռիսկերի կառավարման կատարելագործմանը և հաճախորդակենտրոն բիզնես մոդելների ձևավորմանը:

ՀՀ բանկային համակարգում նորարարական տեխնոլոգիաների ներդրման գործընթացը վերջին տարիներին զգալիորեն ակտիվացել է, սակայն այն շարունակում է բախվել մի շարք կազմակերպական, տեխնոլոգիական, ինստիտուցիոնալ և ֆինանսական գնահատման սահմանափակումների: Այս հանգամանքը պայմանավորում է բանկային նորարարությունների ներդրման գործընթացների գիտական ուսումնասիրության, դրանց արդյունավետության գնահատման և կիրառման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը:

Արդիական է նաև այն հանգամանքը, որ ՀՀ բանկային համակարգում դեռևս ամբողջությամբ ձևավորված չէ նորարարական տեխնոլոգիաների ներդրման տնտեսական արդյունավետության գնահատման միասնական մոտեցում: Այս առումով առանձնակի կարևորություն է ստանում ներդրված տեխնոլոգիաների ֆինանսական ազդեցության և տնտեսական արդյունավետության քանակական գնահատման հնարավորությունների ուսումնասիրությունը:

Այսպիսով, բանկային նորարարական տեխնոլոգիաների ներդրման և զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն՝ նպաստելով ՀՀ բանկային համակարգի տեխնոլոգիական արդիականացմանը, ֆինանսական միջնորդության արդյունավետության բարձրացմանը և ազգային ֆինանսական շուկայի մրցունակության ամրապնդմանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության **նպատակը** հեղինակը ներկայացնում է որպես ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրություն և դրանց զարգացման հնարավորությունների բացահայտում:

Դրված նպատակի իրականացման համար հեղինակը իր առջև դրել է հետազոտության հետևյալ **խնդիրները՝**

- ուսումնասիրել բանկային նորարարությունների առանձնահատկություններն ու տեսակները,
- ներկայացնել բանկային նորարարական պրոդուկտների ներդրման միջազգային փորձը և զարգացման միտումները,
- ուսումնասիրել բանկային համակարգում նորարարական պրոդուկտի ներդրման արդյունավետության գնահատման մեթոդները և մոտեցումները,
- գնահատել ՀՀ առևտրային բանկերի նորարարական գործունեությունը և առաջարկվող նորարարական լուծումները,
- հետազոտել ՀՀ բնակչության կողմից բանկային նորարարական պրոդուկտների կիրառման մակարդակը և դինամիկան,
- գնահատել նորարարական պրոդուկտների ներդրման ֆինանսական ազդեցությունը,

- բացահայտել նորարարական պրոդուկտների ներդրման հիմնախնդիրները ՀՀ առևտրային բանկերում,
- մշակել ՀՀ առևտրային բանկերում նորարարական պրոդուկտների ներդրման արդյունավետության գնահատման մոդելներ,
- վերլուծել ՀՀ առևտրային բանկերում պրոդուկտների ներդրման հեռանկարները:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը՝ ՀՀ առևտրային բանկերն են՝ որպես նորարարական պրոդուկտների ձևավորման, զարգացման և ներդրման հիմնական միջավայր, ***իսկ առարկան***՝ հեղինակը ներկայացնում է, իբրև ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման խթանման, հիմնախնդիրների բացահայտման և արդյունավետության բարձրացման կառավարման մեխանիզմների համալիր կատարելագործման հնարավորությունները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական նորույթը հեղինակը պայմանավորում է ՀՀ բանկային համակարգում նորարարական գործընթացների ներդրման և զարգացման հիմնախնդիրների համակարգված վերլուծությամբ և դրանց արդյունավետության գնահատման նոր մոդելների ու մեթոդական մոտեցումների առաջարկմամբ:

Հետազոտության գիտական նորույթը ամփոփված է հետևյալ հիմնական արդյունքներում.

1. Բացահայտվել և դասակարգվել են նորարարական բանկային պրոդուկտների ընդունման վրա ազդող հիմնական տեխնոլոգիական, կազմակերպական և այլ խոչընդոտները, ինչը կարող է հնարավորություն տալ կառավարել նորարարությունների ներդրման սահմանափակող գործոնները:

2. Ներկայացվել է մատնահետքերի նույնականացման արդյունավետության ինդեքս, որը հիմնված է ներդրումների վերադարձելիության ու ֆինանսական արդյունքների վերլուծության վրա, ինչը հնարավորություն կտա գնահատել ինչպես նոր տեխնոլոգիաների ներդրման, այնպես էլ՝ այլ գործունեության արդյունավետությունը:

3. Վարկավորման արհեստական բանականության արդյունավետության մշակված

ինդեքսի հիման վրա գնահատվել է արհեստական բանականության ներդրման ազդեցությունը բանկային վարկավորման գործընթացների արդյունավետության, շահութաբերության և վարկային ռիսկերի կառավարման վրա:

4. Առաջ է քաշվել խելացի պայմանագրերի ավտոմատացման ֆինանսական ազդեցության ցուցիչ՝ հիմնված գործառնական, իրավական, ժամանակային և այլ ցուցանիշների գնահատման վրա, որը կարող է թույլ տալ որոշել նշված պայմանագրերի ներդրման տնտեսական արդյունավետությունը և բացահայտել բանկի ֆինանսական արդյունքների վրա ազդեցությունը:

5. Մշակվել է բանկային նորարարական արդյունավետության համակցված ցուցիչ՝ հիմնված առաջարկվող երեք մոտեցումների վրա, որը թույլ է տալիս գնահատել բանկային նորարարական տեխնոլոգիաների համալիր ազդեցությունը և իրական արդյունավետությունը:

Հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը և գործնական նշանակությունը

Ատենախոսությունում ստացված հիմնական արդյունքներն ունեն ինչպես տեսամեթոդաբանական, այնպես էլ որոշ գործնական նշանակություն և հիմնված են հետազոտվող բանկի գործունեությունը բնութագրող իրական ֆինանսական և գործառնական ցուցանիշների վրա:

Հետազոտության շրջանակում ներկայացված որոշ առաջարկությունները կարող են կիրառվել առևտրային բանկերի նորարարական ռազմավարության ձևավորման, թվային տրանսֆորմացիայի արդյունավետ կառավարման և գործառնական ռիսկերի նվազեցման գործընթացներում:

Արդյունքների տեսական արժեքը պայմանավորված է նրանով, որ հեղինակի կողմից առաջարկված մոդելները և բանկային նորարարական արդյունավետության համակցված ինդեքսն ուղղված են նորարարական պրոդուկտների ներդրման արդյունավետության գնահատման մեթոդաբանական բացի լրացմանը և կարող են ծառայել որպես հիմք հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Առաջին՝ «Նորարարական պրոդուկտների ներդրման տեսամեթոդաբանական հիմքերը» գլխում ատենախոսը փորձ է կատարել համակարգված ձևով ներկայացնել բանկային նորարարությունների էությունը, դասակարգումն ու առանձնահատկությունները՝ հիմնվելով ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից տեսական մոտեցումների վրա: Անդրադարձ է կատարվել նաև նորարարական պրոդուկտների ներդրման արդյունավետության գնահատման միջազգային մեթոդաբանություններին, ինչպես նաև ուսումնասիրվել է մի շարք երկրների փորձը: Նշված վերլուծությունները հիմք են հանդիսացել նորարարությունների ընդունման վրա ազդող տեխնոլոգիական, կազմակերպչական և միջավայրային գործոնների բացահայտման համար, որոնք իրենց արտացոլումն են ստացել գիտական նորույթի առաջին կետում:

Երկրորդ՝ «Նորարարական պրոդուկտների կիրառման վերլուծությունը և առկա իրավիճակը ՀՀ բանկային համակարգում» գլխում ատենախոսը նպատակադրել է գնահատել ՀՀ առևտրային բանկերի նորարարական գործունեության մակարդակը և զարգացման միտումները: Անդրադարձ է կատարվել թվային վճարումների, մոբայլ բանկինգի և նույնականացման համակարգերի զարգացման դինամիկային, ինչպես նաև իրականացվել է հարցում (1800 հարցվող), որի արդյունքներով փորձել է գնահատել բնակչության թվային պատրաստվածության մակարդակը և նորարարական տեխնոլոգիաների նկատմամբ վստահությունը: Վերլուծվել են նաև նորարարությունների ներդրման հիմնախնդիրները, այդ թվում՝ կիբերանվտանգության, իրավական կարգավորման և տվյալների կառավարման ոլորտներում: Կատարված վերլուծությունը հիմք է հանդիսացել հետագա մոդելային մոտեցումների և առաջարկների ձևավորման համար:

Երրորդ՝ «Նորարարական բանկային պրոդուկտների ներդրման հիմնուղիները և դրանց ազդեցության գնահատումը» գլխում ատենախոսը անդրադարձ է կատարել կոնկրետ տեխնոլոգիական լուծումների՝ արհեստական բանականության, կենսաչափական նույնականացման և խելացի պայմանագրերի կիրառման արդյունավետության գնահատմանը: Հետազոտության համար օգտագործվել են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի տվյալները, որոնց հիման վրա մշակվել և կիրառվել են հեղինակային մոդելները, ինչպես նաև ձևակերպվել է բանկային նորարարական արդյունավետության համակցված ինդեքսը: Նշված մոտեցումներով և հաշվարկներով հեղինակը հիմնավորել է ներկայացված գիտական նորույթները:

Եզրակացություններ բաժնում ատենախոսը ներկայացրել է հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումները և ձևակերպել տեսական ու կիրառական բնույթի առաջարկություններ, որոնք բխում են իրականացված վերլուծություններից և ուղղված են ՀՀ բանկային համակարգում նորարարական տեխնոլոգիաների ներդրման գործընթացների կատարելագործմանը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

1. Ատենախոսությունում ներկայացված իրավական կարգավորման և ՀՀ բանկային համակարգի վիճակի գնահատման հարցերը անմիջականորեն առնչվում են հետազոտության առարկային՝ ըստ հեղինակի իսկ ներկայացման «համալիր կատարելագործման հնարավորության», սակայն նշված ուղղություններով վերլուծությունը լիարժեք խորացված չէ, ինչպես նաև սահմանափակ է առաջարկների կիրառելիության գնահատումը համապատասխանության տեսանկյունից, որը հանդիսանում է բանկային գործունեության առանցքային հիմնաքարերից մեկը: Նույն համատեքստում, գիտական նորույթի առաջին կետում բերված TOE/TOES մոտեցումների շրջանակում ներկայացված տեխնոլոգիական, կազմակերպչական և միջավայրային (իրավական, կառավարչական, ֆինանսական) խոչընդոտների վերաբերյալ ատենախոսը հիմնականում սահմանափակվել է դրանց բացահայտմամբ: Այսինքն, նշված խնդիրների հաղթահարման, մեղմման կամ կատարելագործման ուղղությամբ հստակ մեթոդաբանական մոտեցումներ և կիրառական լուծումներ չենք նկատում, ինչպես նաև դրանց իրականացման հնարավորությունների և ակնկալվող արդյունքների, այդ թվում՝ ֆինանսական գնահատումները:

2. Ատենախոսությունում ներկայացված մի շարք դրույթներ, այդ թվում՝ հետազոտության առանցքային առարկա հանդիսացող նորարարական բանկային պրոդուկտների առանձին տեսակներ, դիտարկված են հիմնականում տեսական և միջազգային փորձի շրջանակում՝ առանց ՀՀ բանկային համակարգում դրանց առկայության, բացակայության կամ տեղայնացման հնարավորությունների և գործունեության իրական տնտեսական վիճակի համարժեք գնահատման: Ավելին, հաշվի առնելով ՀՀ բանկային համակարգի խիստ կարգավորված իրավատնտեսական միջավայրը՝ նպատակահարմար էր ապահովել տվյալ հարցի առավել խորքային վերլուծություն, ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ ֆինանսական, համապատասխանության և ռիսկերի կառավարման գործոնների համատեքստում:

3. Տեխնոլոգիական նորարարությունները, մի կողմից, հնարավորություն են տալիս նվազեցնել որոշակի գործառնական և վարկային ռիսկեր, սակայն մյուս կողմից առաջացնում են նոր՝ տեխնոլոգիական, մոդելային և համապատասխանության, զեղծարարության բնույթի ռիսկեր, որոնք պահանջում են համալիր գնահատում և կառավարում: Ատենախոսությունը զգալիորեն կշահեր, եթե նշված ռիսկերի կառավարման, սահմանաչափերի ձևավորման և ռիսկային ախորժակի գնահատման հարցերը բավարար չափով դիտարկվեին, ինչի արդյունքում ավելի հստակ ներկայացված կլինեին առաջարկների կիրառելիության և կառավարչական որոշումների հիմնավորման մեթոդական հիմքերը, մասնավորապես՝ ֆինանսական ազդեցության գնահատման համատեքստում: Նշվածը հատկապես կարևոր է արհեստական բանականության գործիքակազմի կիրառման պարագայում, որը հանդիսանում է աշխատանքի գիտական նորույթի երրորդ կետի առանցքային ուղղություններից մեկը:

4. Ատենախոսության գիտական նորույթի երկրորդ և չորրորդ կետերում ներկայացված մատնահետքային նույնականացման և խելացի պայմանագրերի կիրառումը հիմնականում վերաբերում է անվտանգության, նույնականացման, տվյալների հասանելիության և զեղծարարություններից պաշտպանվելու հարցերին: Թեև նշված ուղղությունները կարևոր նշանակություն ունեն բանկային համակարգի հուսալիության ապահովման տեսանկյունից, այնուամենայնիվ դրանք առավելապես կրում են ընդհանուր տեխնոլոգիական բնույթ և անմիջականորեն չեն առնչվում բուն բանկային կամ ֆինանսական գործառնությունների՝ միջոցների ներգրավման, տեղաբաշխման կամ վճարահաշվարկային ծառայությունների մատուցման հիմնական գործընթացներին:

Արդյունքում, աշխատանքը կշահեր, եթե ավելի հստակ ներկայացվեր հետազոտության ուղղվածությունը՝ այն չդիտարկվելով ավելի շատ որպես տեխնոլոգիական լուծումների ուսումնասիրություն, այլ՝ բանկային գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ֆինանսատնտեսական լուծումների մշակում:

5. Հետազոտությունում ներկայացված էմպիրիկ տվյալները հիմնված են հիմնականում մեկ բանկի՝ «Ամերիաբանկի» օրինակի վրա՝ այն էլ առանց ընտրության

հստակ հիմնավորման: Միաժամանակ, ստացված արդյունքները, հեղինակի կողմից, ընդհանրացվում են ՀՀ բանկային համակարգի մակարդակով՝ առանց այլ բանկերի կամ շուկայի միջին ցուցանիշների հետ համեմատական վերլուծության, որի առկայությունը կբարելավեր եզրակացությունների գիտական արժեքը:

6. Գիտական նորույթի հինգերորդ կետի շրջանակում առաջարկվող ինդեքսների կարևորությունը ընդունելով՝ նպատակահարմար կլիներ դրանց նկատմամբ իրականացնել նաև հեռանկարային ֆինանսական վերլուծություն՝ գնահատելով նորարարությունների ներդրման արդյունավետությունը որպես ներդրումային ծրագրի: Մասնավորապես, ատենախոսությունը կշահեր ներկայացված առաջարկների կիրառման ծախսերի, ակնկալվող եկամուտների և համապատասխան ֆինանսական ցուցանիշների (օրինակ՝ ներդրման զուտ ներկա արժեքի և այլ արդյունավետության չափանիշների) հաշվարկի առկայության դեպքում, ինչը հնարավորություն կտար առավել հիմնավորված գնահատել դրանց նպատակահարմարությունը բանկային կառավարման և բաժնետերերի շահերի տեսանկյունից, ինչպես նաև ծառայել որպես կառավարչական որոշումների ընդունման գործնական հիմք:

7. Բնակչության կողմից նորարարական բանկային պրոդուկտների կիրառման մակարդակի գնահատման ընթացքում նպատակահարմար էր առավել խորքային անդրադառնալ ֆինանսական գրագիտության մակարդակին և տեխնոլոգիական հասանելիության գործոններին, որոնք հանդիսանում են դրանց կիրառման առանցքային պայմաններից: Նշված խնդիրների վերլուծության ներառումը կարող էր հնարավորություն տալ առավել ամբողջական գնահատել նորարարությունների ընդունելիության և տարածման իրական նախադրյալները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինեսա Վահագի Նուշիկյանի կողմից կատարվել է արդիական և գիտամեթոդական պատշաճ մակարդակի հետազոտություն՝ տեսական հիմնավորվածությամբ և գործնական կիրառելիությամբ հանդերձ: Այն կարելի է որակել որպես ինքնուրույն կատարված ամբողջական գիտական աշխատանք, որտեղ հեղինակի կողմից դրված և լուծված են ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման արդյունավետության գնահատման և դրանց զարգացման հեռանկարների հետ կապված մի շարք կարևոր գիտական խնդիրներ:

Ներկայացված հետազոտության տեղեկատվական-վերլուծական հենքը կարող է կիրառվել ՀՀ բանկային համակարգում նորարարական քաղաքականության և կառավարման մեխանիզմների կատարելագործման գործում:

Ատենախոսության գիտական արդյունքները իրենց արտացոլումն են գտել հեղինակի կողմից հրատարակված թվով տասը գիտական հոդվածներում, որոնցից առնվազն յոթը

արտացոլում են ներկայացված գիտական նորույթի դրույթները: Դրանցից մեկը տպագրվել է SCOPUS միջազգային շտեմարանում ընդգրկված ամսագրում, իսկ ինը՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ընդունելի գիտական հրատարակություններում:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և ներկայացված է սահմանված կարգով:

Այսիսով՝ կարելի է եզրակացնել, որ **Ինեսա Վահագի Նուշիկյանի «Նորարարական պրոդուկտների ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Արմեն Աշմատի Հակոբյան**
26.03.2026թ.

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Հակոբյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ա. Հ. Դարբինյան**